Պաշտոնական կարծիք

Նորիկ Էդիկի Շահնազարյանի

«ՀՀ Սահմանադրության արդի հայեցակարգային մոտեցումները, իրավաբանական հատկանիշները և զարգացման միտումները» թեմայով ԺԴ.00.02. - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ.

Գրախոսության ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը գիտական ինքնուրույն հետազոտություն է ՀՀ Սահմանադրության իրավաբանական հատկանիշների և զարգացման միտումների մասին:

Քննարկվող աշխատանքի արդիականությունը հիմնականում պայմանավորված է մեզանում իրականացվող սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությամբ:

Հեղինակն իրավացիորեն նշում է, որ սահմանադրությունը հասարակական հիմնարար իրավական անկյունաքարն է, որի վրա կառուցվում են ողջ իրավական համակարգը և իրավահարաբերությունները: Սահմանադրությունը նաև հասարակական, քաղաքական և իրավական փաստաթուղթ է, այն կենդանի և անմիջական գործող իրավունք է իրավական կարգավորման բոլոր ոլորտներում (Ատենախոսություն, էջ 6):

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթը, մեր կարծիքով, արտահայտվում է նրանում, որ հեղինակը համակողմանի և համալիր վերլուծության է ենթարկել ՀՀ Սահմանադրության բովանդակությունը և դրա կատարելագործման հիմնական ուղղությունները, հայեցակարգային մոտեցումները, սահմանադրական դրույթների անմիջական գործողության հարցերը:

Հեղինակը սահմանադրության բովանդակության քննարկումն իրականացրել է արդի սահմանադրականության դիրքերից, ինչպես նաև հաշվի է առել հայոց պետականության և հասարակական զարգացումների արդի միտումները:

Աշխատանքում ձևակերպված հայեցակարգային մոտեցումները, հետևությունները և գործնական առաջարկությունները հիմնված են համակողմանի վերլուծության արդյունքների հիման վրա:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի դիտողություններ և դատողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1) Ըստ հեղինակի սահմանադրությունը որպես հիմնական օրենք՝ ինքնին գերակա է մյուս նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ: Դրանում կա որոշակի ճշմարտություն, սակայն սահմանադրության գերակայությունը դրանով չի հիմնավորվում կամ սահմանափակվում: Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործադրումը ապահովվում է, ամենից առաջ, սահմանադրության բովանդակությունում պարունակվող մեխանիզմով, որով ապահովվում է սահմանադրական գերակայությունը, մասնավորապես սահմանադրության ընդունման և փոփոխման բարդ համակարգը, դրա հիմնավորվածությունը, նորմերի իրավաբանական կառուցվածքը, բնույթը, էությունը և այլն:

2) Հեղինակը քննարկելով սահմանադրության իրավաբանական հատկանիշները, կանգ չի առնել նաև սահմանադրական նորմերի նորմատիվության և իրավագորության հատկանիշների վրա, որոնցով է բնութագրվում նաև սահմանադրական նորմերի գերակայությունը և անմիջական գործողությունը:

Վերոնշված դատողությունները բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Սեղմագրում լիարժեքորեն են արտացոլված ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Աշխատանքի բովանդակությունը լիովին համապատասխանում է մասնագիտության թվանիշին:

Հեղինակի կողմից տպագրված գիտական աշխատանքներում լիարժեքորեն են արտացոլված ատենախոսության հիմնական դրույթները:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում եմ, որ Նորիկ Էդիկի Շահնազարյանի «ՀՀ Սահմանադրության արդի հայեցակարգային մոտեցումները, իրավաբանական հատկանիշները և զարգացման միտումները» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող,

ավարտուն և ամբողջական հետազոտություն է, լիովին բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Մ.Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մարտին Անդրանիկի Մանուկյանի ստորագրությունն իսկությունը հաստատում եմ՝ ՀՀ փաստաբանական պալատի
աշխատակազմի ղեկավար՝ Լ.ՍԱՐԳՍՅԱՆ